ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/57223-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-362-13.11.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1831 - Ա որոշումը:

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան
Հեռ. 515685

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-362-13.11.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (Օրենսգիրք) 76-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով, համաձայն որի՝ սահմանվելու են տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչների վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներ: Տվյալ նորմը վերոհիշյալ հոդվածում նախատեսելը, ըստ էության, տեղին չէ, քանի որ դրա կարգավորման առարկան այլ է: Այսպիսի նորմ առանձին հովածի տեսքով պետք է նախատեսել Օրենսգրքի մեկ այլ 11-րդ գլխում, որի կարգավորման առարկան անձանց քրեական դատավարությանը մասնակցելուց ազատելու կամ նրանց բացարկելու հետ կապված իրավահարաբերություններն են:

Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվել է նվազեցնել անչափահասների հարցաքննության ժամկետները, դրանք սահմանելով հետևյալ համամասնությամբ՝ մինչև 7 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ 30 րոպեից, իսկ օրվա ընթացքում՝ մեկ ժամից ավելի: 7-ից 14 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ մեկ ժամից, իսկ օրվա ընթացքում՝ երկու ժամից ավելի:

Օրենսգրքի 205.1-րդ հոդվածով համաձայն. «1. Հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի:

Գտնում ենք, որ Նախագծով առաջարկվող կարգավորումն արդյունավետ չի կարող լինել պայմանավորված այն հանգամանքով, որ նման կարճ ժամկետների սահմանման դեպքում հնարավոր են դեպքեր, երբ վարույթն իրականացնող մարմինը ստիպված ~~պետք է~~ լինի մի քանի օր անընդմեջ անչափահասին կանչել հարցաքննության, ինչն անչափահասի հոգեբանական ճնշման ավելի մեծ վտանգ է պարունակում: Բացի այդ, քննարկվող կարգավորման պայմաններում տվյալ քննչական գործողությունը կարելի է ի սկզբանե ձախողված համարել այն հաշվառմամբ, որ տակտիկական առումով քննիչը նախ զրուցում է երեխայի հետ՝ վերջինիս հուզող հարցերի շուրջ, իսկ ավելի ուշ, երբ քննիչի և անչափահասի միջև ստեղծվում է հոգեբանական կոնտակտ սահուն անցում է կատարում բուն հարցաքննությանը: Սա նշանակում է, որ 30 րոպեում քննիչն ուղղակիորեն չի կարող հոգեբանական կոնտակտ հաստատել անչափահասի հետ, իսկ

անմիջապես հարցաքննությանն անցնելը հնարավոր է ավելի մեծ բացասական ազդեցություն ունենա անչափահասի վրա:

Միաժամանակ հաշվի առնելով անչափահասների խոցելի խմբին պատկանելու հանգամանքը՝ առաջարկում ենք փոփոխություն կատարել հարցաքննության տևողությունը սահմանող հոդվածում՝ նախատեսելով, որ օրվա մեջ անչափահասի հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել չորս ժամը:

Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարել հոգեբանի կամ սոցիալական աշխատողի մասնակցությամբ: Հարկ է նշել, որ Նախագծում առաջարկվող իրավակարգավորումների տեքստից պարզ չէ, թե որ մասնագետներ են համարվելու սոցիալական աշխատող և ինչ է խնդիրներ է լուծելու նրանց մասնակցությունը հարցաքննությանը, ինչն ակնհայտ է հոգեբանի պարագայում: Ուստի, առաջարկում ենք բացառել սոցիալական աշխատողի մասնակցությունը մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությանը:

Գտնում ենք, որ Նախագծով առաջարկվող 207-րդ հոդվածում լրացվող 5-րդ մասում «հարցեր է տալիս» բառերը հարկ է փոխարինել «կարող է հարցեր տալ» բառերով՝ սահմանվող իրավունքի հայեցողական իրացման հնարավորությունն ապահովելու համար:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ քննչական գործողության, այդ թվում հարցաքննության, յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը և իր գործողությունների, քննչական գործողության ընթացքի, բովանդակության և արդյունքների գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք նշվում են արձանագրության մեջ՝ նպատակահարմար չենք համարում նաև Նախագծով առաջարկվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածում լրացվող 7-րդ մասով նախատեսված կարգավորումը:

Նախագծի 5-րդ հոդվածում հղում է կատարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 3-րդ մասին, սակայն հարկ է նշել, որ վերոնշյալ մասը վերաբերելի չէ Նախագծի 5-րդ հոդվածի կարգավորման առարկային: Գտնում ենք, որ հղում պետք է կատարվի նույն հոդվածի 6-րդ մասին:

Առաջարկում ենք նաև Նախագծի 5-րդ հոդվածից հանել անչափահաս տուժողի և կասկածյալի կամ մեղադրյալի անմիջական հանդիպումներն արգելելու վերաբերյալ կարգավորումը, քանի որ վերոնշյալ հոդվածի առաջին պարբերությամբ նշված հարցն արդեն իսկ կարգավորված է: Մասնավորապես սահմանվել է, որ անչափահաս տուժողի մասնակցությամբ առերեսումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում իրականացվելու են միջնորդավորված՝ տեսաձայնագրառման և տեխնիկական այլ միջոցների օգնությամբ՝ դրանով

իսկ բացառելով առերեսման ժամանակ անչափահաս տուժողի և կասկածյալի կամ մեղադրյալի անմիջական հանդիպումը:

Առաջարկում ենք նաև Նախագծի 6-րդ հոդվածում նախատեսված կարգավորումների, մասնավորապես, 341-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությունում «և ցուցմունքներ» բառերը փոխարինել «կամ տալ ցուցմունքներ» բառերով:

Անհրաժեշտ ենք համարում նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի միասնական տերմինաբանությունն ապահովելու համար Նախագծում գործածված «տեսաձայնագրում» բառը փոխարինել «տեսաձայնագրառում» բառով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2019 թվականի N 1831 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Սրբուհի Գալյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-362-13.11.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 9

Երևան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248 քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 76-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական ներկայացուցիչը չի կարող մասնակցել վարույթին, եթե՝

1) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության մեջ այն դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի հետ, ով մասնակցել կամ օրինական ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է վարույթին.

2) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության մեջ կասկածյալի կամ մեղադրյալի կամ նրանց մերձավոր ազգականների հետ.

3) օրենքով կամ դատական ակտով չի կարող լինել օրինական ներկայացուցիչ:»:

Հոդված 2. 1) Օրենսգրքի 205.1-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1 մասով.

«2.1. Մինչեւ 7 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը չի կարող տեւել անընդմեջ 30 րոպեից, իսկ օրվա ընթացքում՝ մեկ ժամից ավելի: 7-ից 14 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը չի կարող տեւել անընդմեջ մեկ ժամից, իսկ օրվա ընթացքում՝ երկու ժամից ավել:»:

2) Օրենսգրքի 205.1 հոդվածի 3-րդ մասում «բժշկի» բառից հետո լրացնել «կամ հոգեբանի» բառերը:

Հոդված 3. 1) Օրենսգրքի 207-րդ հոդվածի 2-րդ մասում «մանկավարժի» բառից հետո լրացնել «կամ հոգեբանի կամ սոցիալական աշխատողի» բառերը:

2) Օրենսգրքի 207-րդ հոդվածի 3-րդ մասում «ներկայացուցչին» բառից հետո լրացնել «եւ մանկավարժին կամ հոգեբանին կամ սոցիալական աշխատողին» բառերը.

3) Օրենսգրքի 207-րդ հոդված լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-9-րդ մասերով.

«5. Քննիչի հանձնարարությամբ, ելնելով երեխայի լավագույն շահերից, անչափահաս վկային կամ անչափահաս տուժողին հարցերը տալիս է հոգեբանը:

6. Անչափահաս վկային կամ անչափահաս տուժողին հարցերը հոգեբանի կողմից, որպես կանոն, տրվում են հետեւյալ դեպքերում՝

1) սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով.

2) ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ գործերով.

3) երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ գործերով.

4) անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի մտավոր զարգացման մեջ հետ մնալու կամ հոգեկան խանգարում ունենալու դեպքում.

5) մինչեւ 14 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննության դեպքում:

7. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը կարող է տեսաձայնագրվել: Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության տեսաձայնագրումը պարտադիր է:

8. Հարցաքննության տեսաձայնագրման վերաբերյալ քննիչը լսում է հարցաքննության մասնակիցների կարծիքները՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը: Տեսաձայնագրման վերաբերյալ հարցաքննության մասնակիցների կարծիքներն արտացոլվում են արձանագրության մեջ: Մասնակիցները հարցաքննության տեսաձայնագրման վերաբերյալ կարծիք չեն հայտնում սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում:

9. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության վայրի ընտրությունն իրականացվում է ելնելով երեխայի լավագույն շահերից, հարմարավետությունից ու նրա տարիքին եւ զարգացվածությանը համապատասխանող պայմանների առկայությունից:»:

Հոդված 4. Օրենսգրքի 209-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Սույն օրենքի 207-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերով նախատեսված դեպքերում հարցաքննության արձանագրությունում պարտադիր արտացոլվում է, որ հարցերը տրվել են հոգեբանի կողմից:»:

Հոդված 5. Օրենսգրքի 216-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Անչափահաս տուժողի մասնակցությամբ առերեսումները՝ սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ, եթե դա է պահանջում երեխայի լավագույն շահը, իրականացվում են միջնորդավորված՝ տեսաձայնագրման եւ տեխնիկական այլ միջոցների օգնությամբ:

Արգելվում են անչափահաս տուժողի անմիջական հանդիպումները կասկածյալի կամ մեղադրյալի հետ:»:

Հոդված 6. Օրենսգրքի 341-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«*Հոդված 341. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը*

1. Անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը դատարանում հարցաքննվում է, եթե նրա հարցաքննությունը չի տեսաձայնագրվել նախնական քննության ընթացքում: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննության տեսաձայնագրությունը վերարտադրվում է դատական նիստերի դահլիճում: Տեսաձայնագրության վերարտադրումից հետո առաջացած հարցերն այլ եղանակով չփարատելու դեպքում, անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը ցուցմունք տալու նպատակով հրավիրվում են դատարան:

2. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը՝ նրա ցանկությամբ, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ, կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի

ցուցմունքները, եւ նրան հնարավորություն է ընձեռնվում տվյալ վկային կամ տուժողին տալ հարցեր եւ ցուցմունքներ՝ վկայի կամ տուժողի հաղորդած տվյալների վերաբերյալ:

3. Սույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերում անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը կատարվում է ամբաստանյալի բացակայությամբ՝ պահպանելով սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգը:

4. Դատարանում մինչեւ 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի կամ հոգեբանի կամ սոցիալական աշխատողի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը:

5. 16 տարին չլրացած տուժողը, նրա օրինական ներկայացուցիչը, մանկավարժը, հոգեբանը կամ սոցիալական աշխատողը կարող են դուրս գալ դատական նիստերի դահլիճից անչափահաս տուժողի հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ տուժողի հետագա ներկայությունը:

6. Դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, իրավունք ունի անչափահաս տուժողին թույլ տալ ժամանակավորապես դուրս գալ դատական նիստերի դահլիճից, եթե ապացույցների հետազոտմանը ներկա գտնվելը նրա վրա կունենա բացասական ազդեցություն: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո անչափահաս տուժողի համար հակիրճ հրապարակվում են ապացույցների հետազոտման արդյունքները:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

1.1 Ներածություն.

Անչափահաս տուժողների և անչափահաս վկաների առնչությամբ թե՛ ազգային, թե՛ միջազգային օրենսդրությունը նախատեսում են տարբերակված մոտեցում: Դա պայմանավորված է անչափահասների տարիքային, հոգեբանական, սոցիալական և այլ առանձնահատկություններով:

ՀՀ քր. դատ. օր-ը նույնպես նախատեսում է անչափահաս տուժողների և անչափահաս վկաների վերաբերյալ հատուկ իրավակարգավորումներ: Ներկայումս այդ կարգավորումներն ամբողջությամբ չեն բխում երեխայի լավագույն շահերից և չեն բխում երեխաների պաշտպանության արդի միտումներից:

Առհասարակ, երեխաների հետ վարվեցողությունը երեխայի լավագույն շահով պայմանավորելն ամրագրված է ՀՀ ընտանեկան օրենսգրքում իրականացված փոփոխություններով և *21.12.2017թ.-ի ՀՕ-10-Ն օրենքով* ՀՀ ընտանեկան օրենսգրքում լրացվել է երեխայի լավագույն շահերը բնութագրող նորմը:

Գործող ՀՀ քր. դատ. օր-ն անչափահասների առնչությամբ նախատեսում է հարցաքննության կրճատ տևողություն, օրինական ներկայացուցչի և մանկավարժի մասնակցություն և որոշ այլ առանձնահատկություններ, այն դեպքում, երբ արտասահմանյան երկրներն ու միջազգային փորձն այդ պահանջներն ու պայմանները վաղուց դիտում է ոչ բավարար:

Արդի հասարակությունը վաղուց է գիտակցել անչափահասների մասնակցությամբ դատավարության հարմարեցված լինելու անհրաժեշտությունը՝ ստեղծելով համապատասխան իրավական բազա: Այդ հարցին անդրադարձ կատարվել է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989թ.-ի և Երեխայի սեռական շահագործումից և սեռական բռնություն պաշտպանության մասին ԵԽ 2007թ.-ի կոնվենցիաներում: Այնուհետև թե՛ միջազգային, թե՛ տարածաշրջանային մակարդակում ընդունվել են բազմաթիվ այլ փաստաթղթեր, մասնավորապես՝ Հանցագործության զոհ և վկա երեխաների արդարադատության հարցերի վերաբերյալ ՄԱԿ-ի 2005թ.-ի Մոդելային օրենքը, Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշները (Բանաձև 2005/20), Հանցագործության տուժող և վկա երեխաների մասնակցությամբ արդարադատության հարցերի վերաբերյալ ղեկավար սկզբունքները, ԵԽ նախարարների կոմիտեի առաջարկությունները երեխայակենտրոն արդարադատության վերաբերյալ, Հանցագործության զոհերի և իշխանության չարաշահման արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագիրը և այլն:

Վերը նշված փաստաթղթերը կազմել են նախագծի մշակման իրավական հիմքը:

Խնդրի առկա վիճակն առավել ակնհայտ է դառնում վիճակագրական տվյալների համատեքստում: Այսպես, 2016թ.-ին ՀՀ քննչական կոմիտեի վարույթում է գտնվել երեխաների նկատմամբ կատարված հանցագործություններ վերաբերյալ 200 քրեական գործ: Այդ գործերով տուժող են ճանաչվել 175 երեխա, որոնցից 47-ը՝ մինչև 12 տարեկան, 14-ը՝ 12-14 տարեկան, 72-ը՝ 14-16 տարեկան, 42-ը՝ 16-18 տարեկան:

2017թ.-ին ՀՀ քննչական կոմիտեի վարույթում է գտնվել երեխաների նկատմամբ կատարված հանցագործություններ վերաբերյալ 265 քրեական գործ: Այդ գործերով տուժող են ճանաչվել 203 երեխա, որոնցից 76-ը՝ մինչև 12 տարեկան, 25-ը՝ 12-14 տարեկան, 71-ը՝ 14-16 տարեկան, 31-ը՝ 16-18 տարեկան:

Այսինքն՝ թե՛ երեխաների նկատմամբ կատարված հանցագործությունների, թե՛ տուժող երեխաների թիվն աճել է:

Միջազգային չափանիշների համաձայն՝ եթե երեխան ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության վկա է, ապա երեխայի հարցաքննությունը պետք է անցկացվի տուժող երեխաների համար կիրառվող պայմաններում ու չափանիշներով, ինչպես նաև նա պետք է օգտվի տուժող երեխայի համար նախատեսված հարմարեցված ծառայությունից:

Բոլոր դեպքերում, տուժող կամ վկա երեխաների պարագայում պետք է հարգվեն փոխկապակցված հետևյալ սկզբունքները՝

ա) արժանապատվություն. յուրաքանչյուր երեխա յուրօրինակ և բարձրարժեք մարդկային էակ է, և որպես այդպիսին՝ նրա անհատական արժանապատվությունը, հատուկ կարիքները, հետաքրքրությունները և անձնական կյանքը պետք է հարգվի և պաշտպանվի.

բ) խտրականության բացառում. յուրաքանչյուր երեխա արդարացի և հավասար վերաբերմունքի իրավունք ունի՝ անկախ իր, իր ծնողի կամ օրինական ներկայացուցչի ռասայից, ծագումից, մաշկի

գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, հաշմանդամությունից, ծննդյան կամ այլ կարգավիճակից.

գ) երեխայի լավագույն շահ. յուրաքանչյուր երեխա իրավունք ունի պահանջելու, որպեսզի իր լավագույն շահերին առաջնային ուշադրություն դարձվի: Դա ներառում է պաշտպանության և ներդաշնակ զարգացման հնարավորությունների իրավունքը:

1.2. Առկա հիմնախնդիրները.

ՀՀ քր. դատ. օր-ի կիրառման ընթացքում անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ քրեական գործերի քննության ընթացքում ի հայտ են եկել որոշակի խնդիրներ, որոնց առկայությունը բացասաբար է անդրադառնում թե՛ անչափահասի և նրա իրավունքների պաշտպանության, թե՛ քննության արդյունավետության վրա: Մասնավորապես՝

1) **մանկավարժների մասնակցության ոչ արդյունավետությունը.** անչափահասի հարցաքննությանը ներգրավված մանկավարժի ներկայությունը ձևական բնույթ է կրում և վերջինս ոչ միայն չի աջակցում անչափահասին, այլ նաև հակառակը՝ կարող է առավել վնասել նրան: Այդ իսկ պատճառով, ՀՀ քննչական կոմիտեի պրակտիկայում ներկայումս անչափահաս տուժողների, մասնավորապես՝ սեռական հանցագործությունների դեպքում, հարցաքննությանը մասնագետի կարգավիճակով ներգրավվում է հոգեբան, ով ոչ միայն մեղմում է ստեղծված իրավիճակը, նվազեցնում է երեխայի լարվածությունը, այլ նաև կարող է հոգեբանական տարբեր հնարքների միջոցով նպաստել երեխայի հիշելու կարողության ուժեղացմանն ու հարցաքննության առավել արդյունավետ կազմակերպմանը: Արդյունքում անչափահասին կրկնակի անգամ չեն կանչում հարցաքննությանը, քանի որ նա հնարավորինս ամբողջական է ներկայացրել իրեն հայտնի տեղեկատվությունը:

Քննիչը, հոգեբանի հետ համագործակցելով, կարողանում է օգնել երեխային հաղթահարելու վախը և կաշկանդվածությունը՝ հաշվի առնելով տարիքային և սեռային հոգեբանության առանձնահատկությունները: Մանկավարժը և քննիչը, անգամ ունենալով հոգեբանական որոշակի գիտելիքներ, չեն կարող դա իրականացնել լիարժեք, ինչի արդյունքում կարող է անչափահասի մասնակցությամբ քննչական գործողությունը կրկնվի, անչափահասը չունենա այն հարմարավետության զգացումը, որը կլիներ մասնագետ-հոգեբանի մասնակցության դեպքում:

Ավելին, մանկավարժի պասիվ վարքագծի հետևանքով անչափահասի մոտ կարող է առաջանալ անելանելիության զգացողություն, ինչը բացառվում է հոգեբանի մասնակցության դեպքում:

Գործնականում հանդիպել են դեպքեր, երբ անչափահասն ինքն է խնդրել, որպեսզի իրեն հարցաքննեն մանկավարժի բացակայությամբ:

2) **որոշ դեպքերում օրինական ներկայացուցիչների մասնակցության անարդյունավետությունը.** անչափահասն առաջնային պաշտպանություն և հոգածություն պետք է ստանա ընտանիքում, մասնավորապես՝ այդ պարտականությամբ օժտված են նրա ծնողները: Սակայն, ծնողները ոչ միայն երբեմն կատարում են հանցագործություն իրենց երեխայի նկատմամբ, այլ նաև երեխայի նկատմամբ կատարված հանցագործության դեպքում չեն պաշտպանում իրենց երեխային և արդյունավետորն չեն իրականացնում կամ առհասարակ չեն իրականացնում օրինական ներկայացուցչի գործառույթները: Մասնավորապես՝ նման իրավիճակներ հնարավոր են այն դեպքերում, երբ երեխայի նկատմամբ հանցագործություն կատարելու մեջ կասկածվում է երեխայի մերձավոր ազգականը, մոր փաստական ամուսինը, ընտանիքի անդամը և այնպիսի այլ անձ, ում առնչությամբ օրինական ներկայացուցիչն ունի անձնական շահագրգռվածություն և երկմտում է՝ փաստացի պաշտպանություն իրականացնելու առնչությամբ: Գործնականում հանդիպել են դեպքեր, երբ քննչական գործողության ընթացքում օրինական ներկայացուցիչը խոսքով, ժեստով կամ դեմքի արտահայտությամբ ակնհայտորեն արգելել է երեխային հայտնել տեղեկատվությունը կամ հոգեբանական ազդեցություն ունենալով երեխայի վրա՝ վերջինիս մոտ առաջացրել է լռելու ցանկություն կամ պարտադիր պայմանի զգացողություն: Նման իրավիճակներում օրինական ներկայացուցչի գործողությունները վնասում էին թե՛ երեխային, թե՛ արդարադատությանը: Սեռական բռնության դեպքերից մեկով տուժող երեխան իր ցուցմունքում նշել է, որ քանի որ մայրս համաձայն է, ուրեմն ես էլ եմ հանաձայն, որ դա նորմալ է: Համապատասխան օրենսդրական կարգավորումների բացակայության պայմաններում նման օրինական ներկայացուցիչների փոխարինումն անհնարին է, առավել ևս, եթե օրինական ներկայացուցիչ է եղել միակ ծնողը:

3) **անչափահասի մասնակցությամբ քննչական գործողությունների բազմակիությունը և դատարանում պարտադիր հարցաքննվելը.** Անչափահաս տուժողների և վկաների, մասնավորապես՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար, հանցագործությունների մանրամասները

վերհիշելը և վերարտադրելը տրավմատիկ է: Տրավմայի ուժգնությունը և տևողությունը տարբեր է՝ կախված երեխայի տարիքից, կատարված հանցագործության բնույթից, կատարողի անձից, իրավիճակից և այլ հանգամանքներից, սակայն բոլոր դեպքերում դա անդրադառնում է երեխայի վրա նաև ապագայում: Հետևաբար, որքան շուտ երեխան մոռանա տրավմայի աղբյուրը և որքան նա քիչ այն վերարտադրի (անընդհատ պատմելով, երեխան կարող է այդ դեպքը վերածել առօրեական իրավիճակի և քննարկման ենթակա առարկայի) այդքան ավելի մեծ է հավանականությունը երեխայի՝ հասարակությունում վերաինտեգրվելու և բացասական հետևանքները վերացնելու հարցում: Ներկայումս, երեխաներն առնվազն 4-5 անգամ վերարտադրում են իրենց հետ կատարվածը կամ այն, ինչի ականատեսն են եղել. առաջին անգամ՝ ոստիկանությունում հաղորդում տալուց, երկրորդ անգամ՝ ոստիկանությունում՝ հետաքննիչին կամ օպերատիվ ծառայողին, երրորդ անգամ՝ քննիչին՝ հարցաքննության ժամանակ, չորրորդ անգամ՝ քննիչին՝ լրացուցիչ հարցաքննության կամ առերեսման ժամանակ, և հինգերորդ անգամ՝ դատարանում: Հնարավոր է, որ դեպքերը լինեն էլ ավելի շատ: Նման մոտեցումը չի կարող համարվել երեխայակենտրոն և չի բխում երեխայի լավագույն շահերից, հետևաբար տեխնիկական միջոցներով երեխայի հարցաքննությունը և հետագայում հարցաքննության տեսաձայնագրման վերարտադրումը (նաև դատարանում) հնարավորություն կընձեռի վերացնել նման պրակտիկան:

4) **անմիջական առերեսումների իրականացումը**. գործող << քր. դատ. օր-ը որևէ տարբերակում չի նախատեսում երեխայի, առավել ևս սեռական հանցագործության ենթարկված երեխայի, մասնակցությամբ առերեսման վերաբերյալ, սակայն տուժողին՝ առերեսվել կասկածյալի կամ մեղադրյալի հետ և պատմել կատարվածի մասին, այդքան էլ հեշտ չէ, առավել ևս եթե տուժողը որևէ կախվածության մեջ է գտնվում կասկածյալից կամ մեղադրյալից: Անչափահասների դեպքում, բացի կախվածությունից, կարող է լինել նաև կաշկանդվածություն՝ պայմանավորված տարիքային առանձնահատկություններով[1] և կասկածյալից կամ մեղադրյալից վախի առկայությամբ[2]: Անմիջական առերեսման ժամանակ երեխան կարող է լռել, փոխել իր ցուցմունքները, համաձայնվել կասկածյալի կամ մեղադրյալի հետ և կատարել այլ՝ այնպիսի գործողություններ, որոնց արդյունքում կխեղաթյուրվի իրականությունը: Երեխային նման տրավմայի ենթարկելն անթույլատրելի է և արգելված է ինչպես միջազգային փաստաթղթերով, այնպես էլ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպերով: Միջնորդավորված առերեսումները որևէ կերպով չեն խախտում կասկածյալի կամ մեղադրյալի կոնֆրոնտացիայի իրավունքը, հետևաբար դրա կիրառումն իրավաչափ է, իսկ արդյունավետությունը և անհրաժեշտությունն ակնհայտ՝ երեխայի իրավունքների պաշտպանության համատեքստում:

1.3. Խնդրի կարգավորումը միջազգային փաստաթղթերի և այլ պետությունների օրենսդրության համատեքստում.

1) Ընդհանուր սկզբունքներ

Միջազգային փաստաթղթերն ուղղակիորեն ամրագրում են անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները, շեշտելով, որ դրանց ընթացքում կիրառվող կարևոր սկզբունքներ են հանդիսանում հետևյալները՝

• Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի առաջնային ուշադրության՝ երեխաների վերաբերյալ ընդունվող բոլոր որոշումներում լավագույնս ապահովելով նրանց շահերը, ներառյալ զրկանքների բոլոր ձևերից, չարաշահումներից և խնամքի բացակայությունից պաշտպանության իրավունքը[3]:

##

[1] Երեխան կարող է մտածել, որ հավատալու են միայն մեծահասակին, քանի որ նա փոքր է և անգամ կենցաղային հարցերի շուրջ ընտանիքում վեճերի կամ քննարկումների ժամանակ նախապատվությունը տրվել է մեծահասակներին:

[2] Երեխան վախենում է կասկածյալից կամ մեղադրյալից, եթե նա հեղինակություն է իր համար կամ հասարակությունում, կամ նրա առնչությամբ ձևավորվել է անպատժելիության մթնոլորտ՝ անկախ պատճառներից: Օրինակ, կասկածյալը կամ մեղադրյալը նախկինում կատարել է մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործություններ և քրեական պատասխանատվության չի ենթարկվել: Երեխան, իմանալով դա կամ դրա ականատեսը լինելով, ենթադրում է, որ նա միևնույնն է պատասխանատվության չի ենթարկվի՝ ինչպես և նախորդ անգամներում:

[3] Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիայի 3-րդ հոդված, Հանցագործության տուժող և վկա երեխաների մասնակցությամբ արդարադատության հարցերի վերաբերյալ ղեկավար սկզբունքներ (այսուհետ՝ Ղեկավար սկզբունքներ)

• Տարիքը չպետք է խոչընդոտի երեխայի՝ արդարադատության իրականացման ընթացքում լիարժեք մասնակցության իրավունքի իրացմանը: Յուրաքանչյուր երեխային պետք է վերաբերվել որպես գործունակ վկայի, ով կարող է հարցաքննվել և ում ցուցմունքները չպետք է համարվեն ոչ արժանահավատ՝ միայն տարիքի պատճառով, եթե երեխայի տարիքը և հասունության աստիճանը թույլ են տալիս նրան տալ պարզ և վստահելի ցուցմունքներ՝ օգտագործելով շփմանն օժանդակող միջոցներ կամ օգնության այլ ձևեր կամ առանց դրա[4]:

• Յուրաքանչյուր երեխա, ով կարող է ձևավորել իր սեփական հայացքները, իրավունք ունի ազատ արտահայտել այդ տեսակետներն իրեն վերաբերելի բոլոր հարցերի շուրջ՝ պատշաճ ուշադրություն դարձնելով այդ տեսակետներին երեխայի տարիքին և հասունության աստիճանին համապատասխան[5]:

• Հանցագործության տուժող և վկա երեխաներն առաջնահերթության կարգով օգտվում են իրենց կյանքի պաշտպանությունից: Արդարադատությանը երեխայի մասնակցության վերաբերյալ ցանկացած տեղեկություն պետք է պաշտպանվի[6]:

• Հարցաքննությունները, փորձաքննությունները և քննության այլ ձևերը պետք է իրականացվեն այն մասնագետների կողմից, ովքեր վերապատրաստվել են նման միջոցառումներն իրականացնել՝ ցուցաբերելով նրբազգացություն, հարգանք և մանրակրկտություն[7]:

• Երեխաների մասնակցությամբ բոլոր գործողությունները պետք է անցկացվեն համապատասխան մթնոլորտում՝ հաշվի առնելով երեխայի պահանջմունքները, այն լեզվով, որով շփվում է երեխան և որը հասկանում է՝ նպատակ ունենալով ուժեղացնել երեխայի մասնակցության ունակությունը[8]:

• Հանցագործության տուժող և վկա երեխաները, նրանց ծնողները կամ խնամակալները և օրինական ներկայացուցիչներն արդարադատության իրականացման առաջին իսկ պահից և դրա ողջ ընթացքում պետք է ստանան անհրաժեշտ տեղեկատվություն[9]:

• Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել արդարադատության համակարգի հետ շփումների քանակը սահմանափակելու համար, մասնավորապես հարցաքննությունների քանակը նվազեցնել, մասնավորապես՝ տեսաձայնագրման միջոցով[10]:

• Հանցագործության տուժող և վկա երեխաները պետք է ունենան օգնության և օժանդակ ծառայություններից օգտվելու հնարավորություն, ինչպիսիք են երեխայի վերաինտեգրման համար անհրաժեշտ ֆինանսական, իրավաբանական, խորհրդատվական, բժշկական, սոցիալական և մանկավարժական, ֆիզիկական և հոգեբանական վերականգման և այլ ծառայությունները[11]:[12]

2) Անչափահասի հարցաքննության առանձնահատկությունները.

Հանցագործության զոհ և վկա երեխաների արդարադատության հարցերի վերաբերյալ ՄԱԿ-ի 2005թ.-ի Մոդելային օրենքի 28-րդ հոդվածը[13] նախատեսում է, որ երեխաներն ավելի նրբազգաց են հարցաքննության մեթոդների նկատմամբ, քան մեծահասակները, և նրանց համար պետք է ավելի բարձր մակարդակի տարբեր ձևերով ապահովել պաշտպանություն՝ բացառելով դաժան և կողմնակալ հարցաքննությունը: Խիստ կարևոր է քննիչի, այլ իրավապահ մարմինների աշխատակիցների լավ

[4] Ղեկավար սկզբունքներ

[5] Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդված, Ղեկավար սկզբունքներ

[6] Ղեկավար սկզբունքներ

[7] Ղեկավար սկզբունքներ

[8] Ղեկավար սկզբունքներ, Երեխաների իրավունքների հանձնաժողով, ընդհանուր բնույթի թիվ 12 դիտարկում

[9] Ղեկավար սկզբունքներ

[10] Ղեկավար սկզբունքներ, Եվրոպայի խորհուրդի նախարարների կոմիտեի առաջարկությունները երեխայակենտրոն արդարադատության վերաբերյալ

[11] Ղեկավար սկզբունքներ, Հանցագործության զոհերի և իշխանության չարաշահման արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագիր. Քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության հասանելիության ՄԱԿ-ի սկզբունքները և ղեկավար դրույթները, 4-5 սկզբունքները, ուղեցույցներ 7-8:

[12] Международная тюремная реформа/ Защита прав ребенка в системах уголовного правосудия, էջեր 64-65:

[13] Правосудие: Вопросы, Касающиеся Детей, Находящихся в Конфликте с Законом Типовой Закон о Правосудии в Отношении Несовершеннолетних и Соответствующий Комментарий //https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Russian_Model_Law_21122014_final.pdf

պատրաստվածությունը, քանի որ նրանք հանդիսանում են անչափահասների արդարադատության հետ առաջին շփումն իրականացնողները: Քննիչների վերապատրաստումը պետք է ներառի երեխաների ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական զարգացման, ինչպես նաև առավել խոցելի խմբի երեխաների, օրինակ՝ աղջիկների, հաշմանդամ, անօթևան, կրոնական, ազգային և այլ փոքրամասնություն կազմող երեխաների, կարիքների վերաբերյալ հարցերը:[14]

Երեխայի հարցաքննության ժամանակ նրան պետք է հարգալից վերաբերվել՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան[15]:

Միջազգային իրավական չափանիշների համաձայն՝ պետք է խուսափել, հատկապես սեռական շահագործման զոհ հանդիսացող անչափահաս տուժողների կրկնակի հարցաքննություններից: «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» ԵԽ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի համաձայն՝ «(....) մասնավորապես պետք է ապահովվեն, որ տուժողների և հանցագործություն կատարած անձանց միջև շփումը դատարանում և իրավապահ մարմնի տարածքում տեղի չունենա, եթե այլ բան չեն նախատեսում իրավասու մարմինները՝ ելնելով երեխայի շահերից, կամ երբ նման շփում պահանջվում է նախաքննության կամ վարույթների նպատակներով»: Նույն կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը նախատեսում է, որ «երեխայի հետ հարցաքննությունների թիվը հնարավորինս սահմանափակվի այնքանով, որքանով խիստ պահանջվում է քրեական վարույթի նպատակով», իսկ նույն հոդվածի 2-րդ մասը ամրագրում է, որ «յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու, որ տուժողի կամ, անհրաժեշտության դեպքում, վկայություն տվող երեխայի հետ բոլոր հարցազրույցները հնարավոր լինի ձայնագրել տեսաերիզի վրա, և այդ բոլոր ձայնագրված հարցազրույցները հնարավոր լինի որպես վկայություն ընդունել վարույթի ժամանակ՝ իր ներպետական իրավունքով սահմանված կանոնների համաձայն»:

Անչափահաս երեխային դատարանում կրկնակի հարցաքննության անթույլատրելիության մասին դրույթներ առկա են նաև միջազգային այլ փաստաթղթերում: Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների (Բանաձև 2005/20) 31-րդ կետի համաձայն՝ մասնագետները պետք է իրականացնեն այնպիսի միջոցառումներ, որոնք.

ա) կնվազեցնեն հարցաքննությունների թիվը: Պետք է սահմանել տուժող և վկա երեխաներից ցուցմունք ստանալու հատուկ ընթացակարգեր՝ հարցաքննությունների, ցուցմունքների, լսումների, և հատկապես՝ արդարադատության գործընթացի հետ անհարկի շփումների թիվը նվազեցնելու նպատակով, այդ թվում՝ տեսաձայնագրման կիրառմամբ,

բ) եթե դա նախատեսված է տվյալ իրավական համակարգով՝ կապահովեն տուժող և վկա երեխաների պաշտպանությունը հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի կողմից հարցաքննվելուց՝ միաժամանակ հարգելով երեխայի՝ պաշտպանության իրավունքը: Անհրաժեշտության դեպքում տուժող և վկա երեխաները պետք է հարցաքննվեն (այդ թվում՝ դատարանում) հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի տեսադաշտից դուրս պայմաններում. պետք է նաև տրամադրվեն առանձին դատական սպասասրահներ և մեկուսի հարցաքննության տարածքներ, գ) կապահովեն, որ տուժող և վկա երեխաները հարցաքննվեն երեխայի հանդեպ զգայուն եղանակով՝ դատավորների կողմից հսկողության հնարավորությամբ, նպաստելով ցուցմունքներ տալու գործընթացին և կրճատելով ահաբեկման հնարավորությունը, օրինակ՝ ցուցմունք տալիս օգնելու կամ հոգեբան փորձագետներ նշանակելու միջոցով:[16]

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քր. դատ. օր.-ի 58ա պարագրաֆի համաձայն՝ ցուցմունքը պետք է տեսաձայնագրվի, եթե հարցաքննվում է 16 տարին չլրացած հանցագործությունից տուժած անձը, կամ առկա է վտանգ, որ վկան չի կարող հարցաքննվել դատաքննությանը, իսկ ձայնագրառումն անհրաժեշտ է ճշմարտությունը բացահայտելու համար: Ցուցմունքի տեսաձայնագրումը

##

[14] Երեխայի իրավունքների հանձնաժողով, ընդհանուր բնույթի թիվ 10 դիտարկում, Children's Rights in Juvenile Justice, 2007թ.-ի ապրիլի 25 (CRC/C/GC/10), կետ 40:

[15] Այս համատեքստում տե՛ս՝ Գլխավոր համաժողովի A/RES/67/166 բանաձևը, Human rights in the administration of justice, 2012թ.-ի դեկտեմբերի 20, Կետ 14:

[16] Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու: Երևան, Միջազգային բանտային բարեփոխումներ, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ, 2012, էջ 121:

հետագայում ներկայացնել մեղադրյալին և պաշտպանին՝ հնարավորություն ընձեռելով տալ այն հարցերը, որոնք անհրաժեշտ են պաշտպանության իրավունքի իրականացման համար: Նշված հարցերը հետագայում կրկին դատական դեպոնացման ընթացակարգի շրջանակներում ներկայացնել տուժողին:

Տուժող երեխաներին պետք է հնարավորություն ընձեռնվի առանց դատական նիստին ներկայանալու ցուցմունք տալ դատարանում՝ օգտագործելով նախօրոք արված ձայնագրությունները: Դա օգտակար է երեխայի՝ դատարանում դատական նիստին չսպասելու համատեքստում, քանի որ, բացառվում է հիշողության վատթարացումը և նվազում է դատարանում գտնվելու ժամանակահատվածը: Չնայած կան երկրներ, որտեղ նույնիսկ հարցաքննության ձայնագրման դեպքում երեխային հրավիրում են դատարան՝ խաչաձև հարցաքննության և ձայնագրությունից առաջացած հարցերին պատասխանելու նպատակով[17]:

Անգլիայի օրենսդրությամբ հնարավորություն է ընձեռնվում առանձին հանցագործություններով տուժող հանդիսացող 14 տարին չլրացած անչափահասների հետ խաչաձև հարցաքննությունը տեսաձայնագրել, ոչ միայն դատարանում, այլ նաև՝ մինչև դատաքննությունը: Մյուս դեպքերում անչափահասը պետք է ներկա գտնվի ամբողջ դատական ընթացքին, և նրա հետ խաչաձև հարցաքննությունն իրականացվում է վիդեոկոնֆերանսի միջոցով:[18]

Պետք է նաև ուշադրություն դարձնել անչափահասների հարցաքննության կարգին Ֆրանսիայում: Հարցաքննության ընթացքում անչափահասի իրավունքների և օրինական շահերի երաշխիքը երրորդ անձի կողմից ուղեկցումն է: Դա պայմանավորված է նրանով, որ անհրաժեշտության դեպքում՝ «կողմնակի» անձը կարող է ընդհատել հարցաքննությունը կամ փոխել հարցաքննության տեխնիկան՝ ելնելով երեխայի շահերից: Քանի որ կրկնվող հարցաքննությունները միշտ բացասական են անդրադառնում դեռահասի հոգեբանական զարգացման վրա, այդ իսկ պատճառով տեսաձայնագրմամբ կատարված հարցաքննությունն անչափահաս տուժողների համար նպատակ է հետապնդում կանխել երեխային բարոյական վնաս հասցնելը[19]: Ուղեկցող անձը հոգեբան է, սոցիալական աշխատող, մանկավարժ:

Հարցաքննության կատարման վայրը կարևոր ազդեցություն ունի երեխայի՝ հարցերին պատասխանելու ունակության վրա: Հարցաքննության վայրն ընտրելիս պետք է նկատի ունենալ, որ հարցաքննության սենյակները լինեն՝ առաջին՝ հարմարավետ և հաճելի՝ անչափահասի և իրավապահ մարմինների աշխատակիցների համար, երկրորդ՝ անչափահասի համար գրավիչ՝ մանկահասակների համար այդտեղ պետք է լինեն տիկնիկներ, խաղալիքներ, նկարչական տետրեր և մատիտներ, մյուսների համար՝ գունազարդ կահույք, գրքեր, հեռուստացույց և այլն, երրորդ՝ հանգիստ վայր: Եթե նախաքննության մարմի շինությունում չկա համապատասխան սենյակ, անհրաժեշտ է պայմանավորվել երեխաներին օգնություն/աջակցություն տրամադրող կենտրոնի (հասարակական կազմակերպության) հետ, որպեսզի հարցաքննությունն անցկացվի նրանց սենյակներից մեկում:[20]

Անչափահաս տուժողների, իսկ անհրաժեշտության դեպքում նաև վկաների հարցաքննությունն անհրաժեշտ է կատարել տեսաձայնագրության կիրառմամբ, որի հիմնական առավելություններն են.

###

[17] Международная тюремная реформа/ Защита прав ребенка в системах уголовного правосудия. С.72

[18] Яшин А.В., Слашкина В.Р. Сравнительный анализ криминалистической тактики когнитивного допроса несовершеннолетних потерпевших в Российской Федерации и некоторых зарубежных странах. Пенза, Пензенский государственный университет// http://evansys.com/articles/nauchnye-issledovaniya-v-oblasti-yurisprudentsii-sbornik-nauchnykh-trudov-po-itogam-mezhdunarodnoy-n/sektsiya-7-ugolovnyy-protsess-kriminalistika-operativno-rozysknaya-deyatelnost/sravnitelnyy-analiz-kriminalisticheskoy-taktiki-kognitivnogo-doprosa-nesovershennoletnikh-poterpevsh/

[19] Марковичева Е.В. Использование специальных психологических знаний по уголовным делам с участием несовершеннолетних// Уголовно-процессуальные и криминалистические проблемы борьбы с преступностью: материалы Всероссийской научно-практической конференции. Орел: Орловский юридический институт МВД России им. В.В. Лукьянова, 2016. С. 189.

[20] Օ.Բրայան, Թ.Հոթեն, Ա.Վան դեն Բորն. Ինչպես հարցաքննել թրաֆիքինգի/շահագործման ենթարկված անչափահասներին /մեթոդական ձեռնարկ իրավապահ մարմինների աշխատակիցների համար/: Երևան, 2012, էջեր 18-19:

• երեխայի ցուցմունքների, ներառյալ՝ նրա վարքագծի (երեխայի հուզական արձագանքները, նրա դիմախաղային և ժեստային առանձնահատկությունները) առավել ճիշտ գրանցման ու ամրագրման հնարավորությունը, ի տարբերություն գրավոր արձանագրության,

• անչափահասի հարցաքննությունների թիվը քրեական գործի քննության ընթացքում կրճատելու, ինչպես նաև դատական նիստերն առանց անչափահասի մասնակցության անցկացնելու հնարավորությունը:[21]

Տեսաձայնագրության կիրառման ժամանակ հնարավոր է բացահայտել հաճախակի հանդիպող հետևյալ սխալները.

1. Քննիչը փոխարինում է երեխայի կողմից օգտագործվող բառերը և արտահայտություններն իր սեփական՝ հասուն, «ճիշտ» տերմիններով: Հետագայում դա կարող է հանգեցնել դատարանում ստացված տեղեկատվության հավաստիության վերաբերյալ կասկածների: Կարևոր է արձանագրությունում բառացիորեն ամրագրել երեխայի կողմից օգտագործվող դարձվածքները և արտահայտությունները:

2. Քննչական գործողությունների մասնակիցներին չեն պարզաբանվում նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչը հետագայում հանգեցնում է քննչական գործողությունն անօրինական ճանաչելուն:[22]

3) Անչափահասի մասնակցությամբ առերեսման առանձնահատկությունները.

Միջնորդավորված առերեսման մեթոդի կիրառման իրավաչափության գնահատման համար կարևոր է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը: Այսպես, ՄԻԵԴ-ը Ս.Ն. ընդդեմ Շվեյցարիայի գործով արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Չի կարելի պնդել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետը պահանջում է, որպեսզի բոլոր դեպքերում հարցերը տրվեն անմիջականորեն մեղադրյալի և պաշտպանի կողմից»: Այս գործում արտահայտված իրավական դիրքորոշումը ճիշտ գնահատելու համար պետք է հաշվի առնել գործի հանգամանքները: Այսպես, դիմողը անչափահաս Մ.-ի դեմ սեռական հանցագործության մեղադրանքով դատապարտվել է 8 ամիս ազատազրկման: Սույն գործով մեղադրական դատավճռի հիմքում ընկած է եղել առավելապես Մ.-ի ցուցմունքները և դրանց տեսա- և ձայնագրությունները: Մ-ին իրենց տանը հարցաքննել է ոստիկանը: Դիմողի փաստաբանը համաձայնել է չմասնակցել հարցաքննությանը, քանի որ Մ.-ի փաստաբանը նույնպես չէր կարող մասնակցել այդ գործողությանը: Սակայն դիմողի փաստաբանը նախօրոք ձևակերպել է իր հարցերը, որոնք ոստիկանի կողմից ներկայացվել են Մ.-ին: Հետագայում փաստաբանը հարցաքննության ձայնագրությունների հիման վրա հաստատել է, որ հարցաքննության ընթացքում շոշափվել են այն հարցերը, որոնք ինքը կցանկանար ներկայացնել: Մ-ն դատարանում ցուցմունք չի տվել: Դատական քննության ընթացքում վերարտադրվել են Մ.-ի առաջին հարցաքննության ձայնագրությունները և արձանագրությունները: Դիմողը դատաքննության ընթացքում չի միջնորդել, որպեսզի Մ-ն անձամբ մասնակցի դատավարությանը: Դատարանը նշել է, որ այս գործով կարելի է ընդունել դիմողի պնդումն այն մասին, որ նա ձեռնպահ է մնացել Մ-ին դատարան կանչելու և անձամբ նրան հարցաքննելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելուց, քանի որ այդպիսի միջնորդությունը կմերժվեր: Միևնույն ժամանակ ՄԻԵԴ-ը նշել է, որ ոստիկանության աշխատակցի հետ Մ.-ի երկրորդ զրույցը տեղի է ունեցել դիմողի փաստաբանի միջնորդությամբ, ով համաձայնվել է չմասնակցել հարցաքննությանը և այդ կապակցությամբ առարկություն չի ունեցել: Նա չի միջնորդել որպեսզի հարցաքննությունը հետաձգվի կամ էլ տեսագրվի, մինչդեռ պաշտպանը նման հնարավորություն ունեցել է: Ավելին փաստաբանը հնարավորություն է ունեցել ոստիկանի միջոցով տուժողին տալ հարցերը և բավարարված է եղել հարցերի պատասխաններով: Սույն գործով ՄԻԵԴ-ը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում չի արձանագրել:[23]

##

[21] Методические рекомендации по организации и ведению допроса несовершеннолетних в специализированном помещении на этапе следствия. - СПб: Санкт-Петербургская общественная организация. «Врачи Детям» , 2014. էջ 45

[22] Նույն տեղը:

[23] Путеводитель о прецедентной практике Европейского суда по правам человека за 2002 года. Науч. ред.-сост. Ю.Ю. Берестнев, М.В. Виноградов. Перевод с англ. В.А. Власихина. М. 2004.էջ 118:

Համանման մոտեցումներ ՄԻԵԴ-ը նախատեսել է Ալ-Քավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության (case of Al-Khawaja and Tahery v. the United Kingdom) գործով 15.12.2011 թ.-ի վճռով, Պ.Ս.-ն ընդդեմ Գերմանիայի (P. Germany) 20.12.2001թ.-ի վճռով և այլ ակտերով:

Ուկրաինայի քր. դատ. նոր օր-ի 224-րդ հոդվածի 9-րդ կետի 5-րդ պարբերության համաձայն՝ «սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների, ինչպես նաև բռնությամբ կատարվող հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթով նախկինում հարցաքննված երկու և ավելի անձանց ցուցմունքների միջև հակասությունները լուծելու նպատակով փոքրահասակ կամ անչափահաս երեխայի ու կասկածյալի միջև հարցաքննություն չի կարող անցկացվել»: Էստոնիայի Հանրապետության քր. դատ. օր.-ում կատարված փոփոխությունների համաձայն՝ դատարանն իրավասու է անչափահասին չիրավիրելու դատարան և թույլատրելու որպես ապացույց ներկայացնել նախաքննության ընթացքում տվյալները, եթե՝ 1. պաշտպանության կողմը հնարավորություն է ունեցել նախաքննության ընթացքում հարցեր տալ վկային, 2. եթե վկան 10 տարեկանից փոքր է, իսկ հարցաքննությունը կվնասի նրա հոգեբանությանը, 3. եթե վկան փոքր է 14 տարեկանից, իսկ հարցաքննությունը վերաբերում է սեռական հանցագործություններին:[24]

Սեռական հանցագործության զոհ անչափահասին դատարանում առերես (դեմ առ դեմ) հարցաքննելու հարցին անդրադարձել է ԱՄՆ գերագույն դատարանը: Այսպես, 1988թ.-ին Կայն ընդդեմ Այովայի գործով Գերագույն դատարանը գտել է, որ խախտվել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքը, քանի որ սեռական հանցագործության երկու զոհերը հարցաքննվել են միակողմանի տեսակապի միջոցով՝ պաշտպանիչ էկրանի հետևում, որի պայմաններում երեխաները չեն տեսել մեղադրյալին, իսկ մեղադրյալը ոչ պարզ տեսանելի պայմաններում է հետևել հարցաքննությանը: Մեղադրյալը բողոքարկել է, որ պաշտպանիչ էկրանի կիրառմամբ երեխաների հարցաքննությամբ խախտվել է դեմ առ դեմ հակընդդեմ հարցման իրավունքը: ԱՄՆ գերագույն դատարանը նշված գործով հաստատել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի խախտում և սահմանել, որ հակընդդեմ հարցումը պետք է իրականացվի դեմ առ դեմ: Սակայն, երկու տարի անց ԱՄՆ գերագույն դատարանը մեկ այլ գործով վերը նշված ընդհանուր կանոնից սահմանել է բացառություն: ԱՄՆ գերագույն դատարանն ուժի մեջ է թողել Մերիլենդ նահանգի օրենսդրական կարգավորումը, որի համաձայն՝ դատավորը հնարավորություն ունի երեխայի հարցաքննությունն իրականացնել միակողմանի տեսակապի միջոցով: Այս դեպքում երեխան, դատախազը և մեղադրյալի փաստաբանը գտնվել են առանձին սենյակում, իսկ դատավորը, երդվյալ ատենակալները և մեղադրյալը՝ դատական նիստերի դահլիճում: Երեխան ուղղակի և առերես հարցաքննության է ենթարկվում առանձին սենյակում, իսկ դատական նիստերի դահլիճում գտնվող դատավարության մասնակիցները հարցաքննությանը հետևել են տեսակապի միջոցով:[25]

4) Հարցաքննության տևողություն.

Քննիչն անչափահաս տուժողի հարցաքննության առավելագույն տևողության օրենսդրական սահմանափակումից բացի, պետք է նկատի ունենա, թե երեխան ինչ ժամանակահատվածով կարող է կենտրոնացնել իր ուշադրությունը, մասնավորապես.

1. դպրոցականների ուշադրության կենտրոնացման ունակությունը, կախված տարիքից և զարգացվածության աստիճանից, կարող է տատանվել 30 րոպեից մինչև 1.5 ժամ, սակայն հարցաքննության արդյունավետ տևողությունը 45 րոպե է (1 դասաժամ դպրոցում).

2. նախադպրոցականների հարցաքննության արդյունավետ տևողությունն է՝ 20 րոպեից ոչ ավել:[26]

ՌԴ քր. դատ. օր-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 1-ից) սահմանվել է վերոնշյալ հարցի վերաբերյալ հետևյալ կանոնները.

##

[24] Ա. Ղամբարյան, Դ. Թումասյան. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները.- Եր.: «Սկեռչ-Սթայլ» ՍՊԸ, 2015. էջեր 115-116:

[25] Jessica Smith.Remote Testimony and Related Procedures Impacting a Crim inal Defendant's Confrontation Rights. Administration o f justice Bulletin. N. 2013/02.

[26] Методические рекомендации по организации и ведению допроса несовершеннолетних в специализированном помещении на этапе следствия. - СПб: Санкт-Петербургская общественная организация. «Врачи Детям», 2014. էջ 18:

• 7 տարին չլրացած անչափահաս վկայի կամ տուժողի մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունները մեկ օրվա ընթացքում չեն կարող գերազանցել մեկ ժամը, իսկ առանց ընդմիջման կարող են տևել առավելագույնը 30 րոպե:

• 7-14 տարեկան անչափահաս վկայի կամ տուժողի մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունները մեկ օրվա ընթացքում չեն կարող գերազանցել երկու ժամը, իսկ առանց ընդմիջման կարող են տևել առավելագույնը 1 ժամ:

• 14 տարին լրացած անչափահաս վկայի կամ տուժողի մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունները մեկ օրվա ընթացքում չեն կարող գերազանցել չորս ժամը, իսկ առանց ընդմիջման կարող են տևել առավելագույնը 2 ժամ:

5) Հոգեբանի մասնակցությունը և նրա կողմից հարցեր տալը.

Լեհաստանում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Դանիայում և այլ երկրներում ստեղծված են հատուկ երեխայակենտրոն զրույցի համար սենյակներ: Լեհաստանի արդարադատության նախարարությունը հասարակական կազմակերպությունների հետ համատեղ ստեղծել է հարցաքննության սենյակներ՝ տուժող կամ վկա երեխաների հետ հարցազրույցների համար, որտեղ աշխատում են ձեռնահաս մասնագետներ: Այսպիսի աշխատակիցներն ապահովում են դատավորի հարցազրույցի իրականացմանը հոգեբանի ներկայությունը, ինչպես նաև այլ անձանց (դատախազի, մեղադրյալի, փաստաբանների) ներկայությունը հարևան սենյակում, որտեղ տեղադրված է երկկողմանի հայելի կամ իրականացվում է հարցազրույցի ուղիղ հեռարձակում: Հարցազրույցի սենյակում երեխաների համար ստեղծված են հարմարավետ պայմաններ, ինչպես նաև սենյակն ապահովված է քրեական դատավարության անցկացման համար անհրաժեշտ սարքավորումներով, օրինակ՝ տեսախցիկ, բարձրախոս և այլն[27]:

Ելնելով Լեհաստանի քրեադատավարական օրենսդրության նորմերից՝ անչափահաս տուժողը պետք է հարցաքննվի մեկ անգամ նախաքննության ընթացքում, չնայած հնարավոր է նաև կատարել լրացուցիչ հարցաքննություն, եթե ի հայտ են եկել կրկնակի հարցաքննությունը հիմնավորող հանգամանքներ: Հոգեբանի դերը Լեհաստանի քննչական պրակտիկայում չի սահմանափակվում միայն կարծիք հայտնելով երեխայի ցուցմունքի հավաստիության վերաբերյալ: Հոգեբանը հարցաքննության ընթացքում նաև խորհրդատու է և պետք է տեղեկացվի քրեական գործում առկա ապացույցների մասին[28]:

Չեխիայում 2007թ.-ից Ներքին գործերի նախարարությունը հատկացրել է հարցաքննության հատուկ սենյակներ՝ սեռական բռնության կամ դաժան վերաբերմունքի տուժող և վկա երեխաների հետ վարվող հարցազրույցների համար: Այս հատուկ սենյակները մեկուսացված են արտաքին միջամտությունից: Դրանք ստեղծված են ոստիկանի կամ հոգեբան-փորձագետների կողմից հանցագործության տուժող կամ վկա երեխաների հարցազրույցի համար՝ հանցագործության փաստը հաստատելու նպատակով: Երեխաների օրինական ներկայացուցիչները (ծնող, խնամակալ, փաստաբան) կարող են հետևել հարցազրույցի ընթացքին հարևան սենյակից: Զրույցը ձայնագրվում կամ տեսաձայնագրվում է՝ հետագա վերլուծության և գնահատման նպատակով, ինչը բացառում է երեխայի կրկնակի հարցաքննությունը [29] : Վերլուծությունն իրականացվում է հոգեբանի կողմից՝ հատուկ ուշադրություն դարձնելով երեխայի վարքագծի, հոգեբանական առանձնահատկությունների, միմիկայի, դրանց փոփոխման և խոսքին համապատասխանելիության տեսանկյունից:

Ի տարբերություն հոգեբանի՝ մանկավարժի մասնակցությունն անհրաժեշտ է երեխայի համար հարմարավետ իրավիճակի ձևավորման, քննչական գործողություններին նրա արագ ադապտացիայի, երեխայի վրա հնարավոր կամայական կամ ոչ կամայական ճնշումների բացառման նպատակով: Թեև մանկավարժները տիրապետում են մանկական հոգեբանության բնագավառում հիմնական մասնագիտական գիտելիքների, սակայն հոգեբանների գործունեության մեջ շեշտադրումը կատարվում է երեխայի հոգեկան վիճակի օրինաչափությունների ճանաչման վրա: Մանկավարժն իր հերթին

##

[27] Council of Europe: Examples of good practice in child-friendly justice: state submissions., Международная тюремная реформа | Защита прав ребенка в системах уголовного правосудия. С.70

[28] Федотов И.С. Расследование насильственных преступлений, совершаемых в отношении малолетних: правовые, теоретические и организационные основы. М.: Юрлитинформ, 2010. С.3.

[29] European Union, Local and regional good practices on victims' rights, 2011, Международная тюремная реформа | Защита прав ребенка в системах уголовного правосудия. С.70

հանդիսանում է մասնագետ դաստիարակության և կրթության բնագավառում և չի կարող տիրապետել հոգեբանական խորը գիտելիքների:[30]

Հոգեբանների մասնակցությունը հիմնավորվում է հետևյալ հանգամանքներով՝

• Նախադպրոցական և ցածր դպրոցական տարիքի երեխաների՝ քրեական գործերով ցուցմունք տալու իրական հոգեբանական ունակությունների ուսումնասիրությունը կարող է հանգեցնել հոգեբանական տեսանկյունից տարբեր աստիճանի բարդությունների վերացմանը.

• Երեխաների հայտնած տեղեկատվության հուսալիության գնահատման գործնական մեթոդների և ընդհանուր սկզբունքների մշակվածությունը, դրանց իմացությունը և օգտագործումը.

• Հանցագործության հետ կապված՝ երեխային հայտնի տեղեկությունների հայտնաբերման և ամրագրման ամբողջականության ապահովումը.

• Երեխաների վկայության հանդեպ կանխակալ վերաբերմունքի բացառումը և միայն տարիքին և զարգացվածության աստիճանին համապատասխան տարբերակված մոտեցում դրսևորելը.

• Երեխաների հարցաքննության նախապատրաստման գործընթացում կոնկրետ տուժողների կամ վկաների անհատական հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելը, ինչը զգալիորեն բարձրացնում է հարցաքննության արդյունավետությունը և ազդում երեխաների ցուցմունքի գնահատման վրա.

• Երեխաների ցուցմունքների արձանագրումը հիմնականում մենախոսության տեսքով չիրականացնելը.

• Հոգեբանի կողմից մանկահասակ վկաների և տուժողների դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունը ներկայացնելն այն դեպքերում, երբ կասկածի տակ է դրվում հոգեպես առողջ երեխայի կողմից որոշ էական հանգամանքներ ճիշտ ընկալելու և դրանց մասին ճիշտ ցուցմունք տալու հարցը:

6) Օրինական ներկայացուցչին բացարկելը.

Անչափահասի օրինական ներկայացուցիչը երբեմն կարող է ի վնաս անչափահասի գործողություններ իրականացնել, ինչի արդյունքում երեխան կաշկանդվում է, փոխում է իր ցուցմունքները:

Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշների համաձայն՝ երեխային պետք է տրամադրվի ուղեկցող անձ, ով ոչ միայն ներկայացնում է երեխային դատավարությունում, այլ նաև տրամադրում է աջակցություն: ԵԽ երկրների մեծամասնությունը լայնորեն կիրառում է այդ պրակտիկան: Մասնավորապես՝ Լեհաստանը, Ֆրանսիան, Չեխիան, Գերմանիան և այլն: Ինչպես արդեն նշվել է նման ուղեկցող անձինք են հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, մանկավարժներ:

Բոլոր դեպքերում ծնողը չի կարող մասնակցել քրեական վարույթին, եթե նա ունի անձնական շահագրգռվածություն (գտնվում է ազգակցական կապի կամ կախվածության մեջ այն քննիչի դատավորի, դատախազի), երեխայի հանդեպ հանցագործություն կատարելու մեջ կասկածվողը հանդիսանում է երեխայի ազգական, ծնողը զրկված է ծնողական իրավունքից կամ առկա է դրա իրական հիմքեր և այլն:

2.Առաջարկվող կարգավորման բնույթը.

Օրենքի նախագծով առաջարկվում են նոր իրավական կարգավորումներ, որոնք հանգում են հետևյալին.

2.1. Հարցաքննության տևողության ժամկետի կրճատում. մինչև 7 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննության համար 30 րոպեից, իսկ օրվա մեջ՝ մեկ ժամից ավել, իսկ 7-ից 14 տարեկան վկայի կամ տուժողի համար՝ մեկ ժամից, իսկ օրվա մեջ՝ երկու ժամից ավել: Հոգեբանի եզրակացության հիման վրա կարող է տևողությունն ավելի կրճատվել: Ներկա դրությամբ դա իրականացվում է միայն բժշկի եզրակացության հիման վրա:

2.2. Օրինական ներկայացուցչին վարույթին մասնակցելն արգելելը. Դա իրականացվելու է այն դեպքում, երբ նա՝

[30] Дощицын А.Н. Процессуальные и криминалистические особенности производства следственных действий с участием малолетних.Юрлитинформ. 2015. էջ 73

1) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության մեջ այն դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի աշխատակցի հետ, ով մասնակցել կամ օրինական ներկայացուցչի ներգրավման պահին մասնակցում է վարույթին.

2) գտնվում է ազգակցական կապի կամ անձնական կախվածության մեջ կասկածյալի կամ մեղադրյալի կամ նրանց մերձավոր ազգականների հետ.

3) իր վարքագծով ակնհայտորեն վնասում է անչափահաս կամ անգործունակ մասնակցի շահերին.

4) օրենքով կամ դատական ակտով չի կարող լինել օրինական ներկայացուցիչ:

2.3. Բացի մանկավարժից նաև հոգեբանի կամ սոցիալական աշխատողի ներգրավումը, իսկ երբեմն հարցաքննության ընթացքում հարցեր տալու հնարավորությունը հոգեբանին հանձնարարելը, մասնավորապես՝

- սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով.
- ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ գործերով.
- երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման վերաբերյալ գործերով.
- անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի մտավոր զարգացման մեջ հետ մնալու կամ հոգեկան խանգարում ունենալու դեպքում.
- մինչև 14 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննության դեպքում:

Հարցաքննության արձանագրությունում պարտադիր արտացոլվելու է, որ հարցերը տրվել են հոգեբանի կողմից:

2.4. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը տեսաձայնագրելը. Առավելապես դա ցանկալի է վերը նշված խմբի անչափահասների դեպքում:

2.5. Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը ցանկացած վայրում իրականացնելը՝ ելնելով երեխայի լավագույն շահերից, հարմարավետությունից ու նրա տարիքին և զարգացվածությանը համապատասխանող պայմանների առկայությունից:

2.6 Առերեսումների միջնորդավորված իրականացնելը. Անչափահաս տուժողի մասնակցությամբ առերեսումները վերը նշված խմբի անչափահասների մասնակցությամբ իրականացնելու դեպքերում, ինչպես նաև եթե դա է պահանջում երեխայի լավագույն շահը, իրականացվելու են միջնորդավորված՝ տեսաձայնագրման և տեխնիկական այլ միջոցների (շղարշ, պաշտպանիչ էկրան, թաղանթ) օգնությամբ: Այսինքն՝ արգելվելու են անչափահաս տուժողի անմիջական հանդիպումները կասկածյալի կամ մեղադրյալի հետ:

2.7 Դատարանում հարցաքննության կարգի վերանայում. Անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը հարցաքննվելու է, եթե նախնական քննության ընթացքում նրա հարցաքննությունը չի տեսաձայնագրվել, իսկ տեսաձայնագրվելու դեպքում այն վերարտադրվում է դատական նիստերի դահլիճում և միայն, եթե առաջացած հարցերն այլ եղանակով փարատել հնարավոր չէ, ապա անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը ցուցմունք տալու նպատակով կհրավիրվի դատարան: Դատարանը հնարավորություն կունենա կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ անչափահաս տուժողին թույլ տալ ժամանակավորապես դուրս գալ դատական նիստերի դահլիճից, եթե ապացույցների հետազոտմանը ներկա գտնվելը նրա վրա կունենա բացասական ազդեցություն: Դատական նիստերի դահլիճ վերադառնալուց հետո անչափահաս տուժողի համար հակիրճ կհրապարակվի ապացույցների հետազոտման արդյունքները:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է անչափահաս տուժողների և վկաների իրավունքների պաշտպանության տեսանկյունից բարելավվել ՀՀ քր. դատ. օր-ը, անչափահասների մասնակցությամբ քրեական գործերի քննությունը դարձնել առավել երեխայակենտրոն, արդյունավետորեն պաշտպանել վերջիններիս իրավունքներն ու ազատությունները, նրանց մասնակցությամբ հարցաքննությունը և առերեսումը դարձնել քիչ տրավմատիկ՝ չվնասելով ո՛չ երեխային, ո՛չ էլ քրեական գործի քննությանը: